

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
վիճակագրության պետական խորհրդի նիստի

15.11.2011թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (Խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Աղազարյան, Ս.Դավթյան (Խորհրդի անդամներ)

Հ. Գրիգորյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Զ. Միրզոյան (նախագահի խորհրդական), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Հ. Տիտիզյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Կ.Կույունջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Կ. Շահբազյան (վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում ՝ չորս հարց.

1. «Հաշվետվություն կազմակերպության ղեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» (ձև թիվ 6-Ֆ) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի «Հաշվետվություն կազմակերպության ղեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Հ.Տիտիզյան /

2. «2012 թվականի հունվարի 1-ից ղեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ.Մարտիրոսովա /

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 27-ից 28-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) կողմից կազմակերպված «Հազարամյակի զարգացման 1-ին նպատակը. աղքատության ցուցանիշները և զբաղվածությունը» խորագրով Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ՝ Գ.Մարտիրոսովա /

3.2. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 29-ից 30-ը ՄԱԿ-ի Վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն: Հասկացություններ և բնորոշումներ, 2010» (ԱՄԱՎ 2010) նոր ձեռնարկի և «Գլոբալ ֆորումի որոշումների իրականացում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ՝ Կ.Շահբազյան /

3.3. Հաղորդում՝ Լեհաստանի Կրակով քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 18-ից 19-ը Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Եվրոպական վիճակագրական համակարգերի զարգացումն Արևելյան գործընկերության շրջանակում. ուղղությունները և ռազմավարությունը» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ՝ Ա.Հայրապետյան, Ա.Սաֆյան /

3.4. Հաղորդում՝ Թուրքիայի Անթալիա քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 26-ից 27-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) կողմից կազմակերպված «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Կ.Կույունջյան /

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» (ձև թիվ 6-Ֆ) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիսիզյան/

Որոշեցին՝

հաստատել «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» (ձև թիվ 6-Ֆ) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումը:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «2012 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

հաստատել 2012 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 27-ից 28-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) կողմից կազմակերպված «Հազարամյակի զարգացման 1-ին նպատակը. աղքատության ցուցանիշները և զբաղվածությունը» խորագրով Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Դ. Մարտիրոսովա/

3.2. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 29-ից 30-ը ՄԱԿ-ի Վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն: Հասկացություններ և բնորոշումներ, 2010» (ԱՄԱՎ 2010) նոր ձեռնարկի և «Գլոբալ ֆորումի որոշումների իրականացում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Կ.Շահբազյան/

3.3. Հաղորդում՝ Լեհաստանի Կրակով քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 18-ից 19-ը Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Եվրոպական վիճակագրական համակարգերի զարգացումն Արևելյան գործընկերության շրջանակում. ուղղությունները և ռազմավարությունը» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
/Չեկուցողներ՝ Ա.Հայրապետյան, Ա.Սաֆյան/

3.4. Հաղորդում՝ Թուրքիայի Անթալիա քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 26-ից 27-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) կողմից կազմակերպված «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
/Չեկուցող՝ Կ.Կույունջյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Այլ հարցեր

Լսեցին՝

«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Չեկուցողներ՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «532007.6» թիվը փոխարինել «565726.1» թվով, 3-րդ տողի «66268.3» թիվը փոխարինել «79408.3» թվով, 4-րդ տողի «75853.3» թիվը փոխարինել «79793.1» թվով, ընդամենը տողի «692860.0 » թիվը փոխարինել «743658.3 » թվով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ